

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ԳԿ-19**

ք. Երևան

« 04 » մարտի 2020թ.

ՀՀ գիտության կոմիտեն, ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ջի Վի Սա» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ս Պողոսյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից, ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝  
ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

## **2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

## **2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

## **2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

### 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1499400 (Մեկ միլիոն չորս հարյուր ինսուսունինը հազար չորս հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

### 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

### 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից **ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու** պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է \_\_\_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

### Գ Ն Ո Ր Դ


ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ  
ՀՎՀՀ 02704199  
Ք.ԵՐԵՎԱՆ ՕՐԲԵԼԻ 22  
ՀՀ ՖՆ կենտրոնական  
գանձապետարան  
Հ/Հ 900011033124  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

  
Լ. ՄԱՐԴՈՅԱՆ  
(ստորագրություն)  
Կ.Տ



### Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

«Ջի Վի Մա» ՍՊԸ  
ք. Երևան, Մ.Տարոնցի 15/1  
«Ինեկոբանկ» ՓԲԸ  
Հ/Հ 2050022548811001  
ՀՎՀՀ 02282469  
Էլ. հասցեն՝ [samvel.pogosyan@gmail.com](mailto:samvel.pogosyan@gmail.com)  
Հեռ. +374 95 200 900  
ՏՆՕՐԵՆ

  
Ս. ՊՈՂՈՍՅԱՆ  
(ստորագրություն)  
Կ.Տ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՏՈՒՅՑ\*

|                                      |                                                                           | Ապրանքի                      |                            |                                                                                                               |                |                     |                        |                  |           |               |            | ՀՀ դրամ |  |  |
|--------------------------------------|---------------------------------------------------------------------------|------------------------------|----------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------|----------------|---------------------|------------------------|------------------|-----------|---------------|------------|---------|--|--|
| Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտ արդրող և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը                                                                                         | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն    | մատակարարման  |            |         |  |  |
|                                      |                                                                           |                              |                            |                                                                                                               |                |                     |                        |                  |           | ենթակա քանակը | ժամկետը**  |         |  |  |
| 1                                    | 30141200/1                                                                | Հաշվասարք, գրասենյակային     |                            | 12 նիշանի սերյանի 18X13.5 սմ չափերով, գործողությունները ցուցաբերումով վահանակի վրա ինքնալիցքավորվող           | հատ            | 3100                | 31000                  | 10               | Օրբելի 22 | 10            | 3.12.2020թ |         |  |  |
| 2                                    | 30192100/1                                                                | Ռետին հասարակ                |                            | Ռետին՝ փոքր, նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար                                                       | հատ            | 100                 | 8000                   | 80               | Օրբելի 22 | 80            | 3.12.2020թ |         |  |  |
| 3                                    | 30192121/1                                                                | Գրիչ գնդիկավոր               |                            | Գնդիկավոր, տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով, մեծ և փոքր չափի                                       | հատ            | 120                 | 48000                  | 400              | Օրբելի 22 | 400           | 3.12.2020թ |         |  |  |
| 4                                    | 30192123/1                                                                | Ֆլումաստերներ                |                            | Լրակազմ, տուփերով (կամ պրիների նախնի փաթեթներով)                                                              | հատ            | 500                 | 25000                  | 50               | Օրբելի 22 | 50            | 3.12.2020թ |         |  |  |
| 5                                    | 30192125/1                                                                | Մալկերներ                    |                            | Տարբեր գույնի, նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար, ֆետրից կամ այլ ծալուկներ նյութից տափակ ծայրոցով | հատ            | 500                 | 2500                   | 50               | Օրբելի 22 | 50            | 3.12.2020թ |         |  |  |
| 6                                    | 30192128/1                                                                | Գրիչ գելային                 |                            | Գրիչ, 0,5 մմ ծայրով, տարբեր գույների, գելային:                                                                | հատ            | 100                 | 27000                  | 270              | Օրբելի 22 | 270           | 3.12.2020թ |         |  |  |
| 7                                    | 30192130/1                                                                | Մատիտներ                     |                            | Հասարակ սև կամ գունավոր, հանապատասխան                                                                         | հատ            | 100                 | 40000                  | 400              | Օրբելի 22 | 400           | 3.12.2020թ |         |  |  |

|    |            |                                                               |                                                                                                                                                  |     |     |       |      |           |      |            |
|----|------------|---------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|-----|-------|------|-----------|------|------------|
| 8  | 30192136/1 | Մատիտ, գրաֆիտե, տերարդվոլ վիջուկով                            | կարծրությամբ<br>Մատիտ, մեղանիկական գապացուկային, F, L, MK1 տիպերի, փոխարինվող գրիֆելի անվանական տրամագիծը՝ 0,3, 5, 0,5, 0,7, 1,0, 2,0 և 2,2) մմ: | հատ | 300 | 24000 | 80   | Օրբելի 22 | 80   | 3.12.2020թ |
| 9  | 30192160/1 | Շտրիխներ                                                      | Բաղադրանյութ տպագրված տեքստը մաքրելու համար ջրային հիմքով կամ այլ օրգանական լուծիչով, մինչև 200C չառաջող, կլոնիով, 20 մլ տարրությամբ սրվակներ    | հատ | 300 | 15000 | 50   | Օրբելի 22 | 50   | 3.12.2020թ |
| 10 | 30192210/1 | Պոլիմերային ինքնակաջուն ժապավեն 48մմX100մ տնտեսական մեծ       | Գլանափաթեթված ժապավեն 48 մմ՝ լայնությամբ, սունձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ         | հատ | 250 | 12500 | 50   | Օրբելի 22 | 50   | 3.12.2020թ |
| 11 | 30192220/1 | Պոլիմերային ինքնակաջուն ժապավեն, 19մմx36մ գրասենյակային, փոքր | Գլանափաթեթված ժապավեն 19 մմ՝ լայնությամբ, սունձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 36 մ:         | հատ | 40  | 8000  | 200  | Օրբելի 22 | 200  | 3.12.2020թ |
| 12 | 30192710/1 | Սունձամատիտ, գրասենյակային                                    | Չոր ստիսնձ՝ գրասենյակային (սունձամատիտ), թուղթ սունձելու համար:                                                                                  | հատ | 250 | 20000 | 80   | Օրբելի 22 | 80   | 3.12.2020թ |
| 13 | 30192720/1 | Գծանշիչ                                                       | Տարբեր գույնի՝ նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար,                                                                                    | հատ | 110 | 11000 | 100  | Օրբելի 22 | 100  | 3.12.2020թ |
| 14 | 30192780/1 | Էջարժամիչ                                                     | A4 ձևաչափի, 20 թվային բաժանիչներով:                                                                                                              | հատ | 700 | 35000 | 50   | Օրբելի 22 | 50   | 3.12.2020թ |
| 15 | 30197231/1 | Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ                           | Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակալներին ամրացնելու հնարավորություն:                                                  | հատ | 10  | 50000 | 5000 | Օրբելի 22 | 5000 | 3.12.2020թ |
| 16 | 30197233/1 | Թղթապանակ, թելով թղթայ                                        | Ստվարաթղթից կազեր երկարատև պահման գործերի համար, Բ տիպի, թելակապերով, սովա-րաթղթի խտությունը՝ 1,15 գ/սմ3,                                        | հատ | 60  | 6000  | 100  | Օրբելի 22 | 100  | 3.12.2020թ |

|    |            |                                 |                                                                                                                                                                                                                                                                             |      |      |        |      |           |      |            |
|----|------------|---------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------|------|--------|------|-----------|------|------------|
| 17 | 30197234/1 | Թղթապանակ, կոշտ կազմով          | հաստությունը 0,3-ից մինչև 1,5 մմ:                                                                                                                                                                                                                                           | հաստ | 1000 | 200000 | 200  | Օրբելի 22 | 200  | 3.12.2020թ |
| 18 | 30197622/1 | Թուղթ A4 ֆորմատի 1/21X29.7/     | Թղթապանակ կոշտ սովորաբար լազվով, համապատասխան չափի կոնսոլիդ (ծավալով), մետաղա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար:<br>A4, չկլավնած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, (210X297) մմ.: | կգ   | 640  | 320000 | 500  | Օրբելի 22 | 500  | 3.12.2020թ |
| 19 | 30199230/1 | Նամակի ծրար, A5 ձևաչափի         | Ծրարներ չթախանցող, եռանկյունաչափ փակվող, խիտ թղթից՝ նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար, սահմանված չափի և ձևի:                                                                                                                                              | հատ  | 30   | 63000  | 2100 | Օրբելի 22 | 2100 | 3.12.2020թ |
| 20 | 22811150/1 | Նոթատետրեր                      | Նոթատետր 80 թերթ A4 (210x297) մմ ձևաչափի, սպիտակ                                                                                                                                                                                                                            | հատ  | 2000 | 80000  | 40   | Օրբելի 22 | 40   | 3.12.2020թ |
| 21 | 22811170/1 | Կաշոն թերթիկներ նշումների համար | Թուղթ նշումների համար, գունավոր, կաշուն, տարբեր չափերի, տրցակներով                                                                                                                                                                                                          | հատ  | 300  | 30000  | 100  | Օրբելի 22 | 100  | 3.12.2020թ |
| 22 | 22991170/1 | Ջերմագրվող թուղթ կամ սովորաբար  | Թուղթ Ա (A) մակնիշի (մատիտով, սուշով և ջրաներկով գծագրագրաֆիկական աշխատանք կատարելու համար), 1 մ2 մակերեսով թղթի զանգվածը՝ 200 գ. (610x860) մմ չափերի, ԳՕՍՏ 597-73 կամ համարժեք                                                                                             | կգ   | 2080 | 52000  | 25   | Օրբելի 22 | 25   | 3.12.2020թ |
| 23 | 24911200/1 | Սոսինձ, Էմուլսիա                | Սոսինձ պոլիմերիկաջրատային /էմուլսիա/                                                                                                                                                                                                                                        | կգ   | 1250 | 10000  | 8    | Օրբելի 22 | 8    | 3.12.2020թ |

|    |            |                      |  |                                                                                                      |     |      |        |     |           |     |            |
|----|------------|----------------------|--|------------------------------------------------------------------------------------------------------|-----|------|--------|-----|-----------|-----|------------|
| 24 | 22851500/1 | կաշվեպանակ           |  | 731 x 22.5/սմ չափի, «Նուբես» կազմարարական կաշվից, կամ համարժեքը, շագանակագույն, գինանշանով:          | հատ | 4500 | 153000 | 34  | Օրբելի 22 | 34  | 3.12.2020թ |
| 25 | 39241210/1 | մկրատ, գրասենյակային |  | Գրասենյակային, մետաղյա, սուր ծայրով, պլաստմասե բռնակով, 18 սմ երկարությամբ:                          | հատ | 300  | 9000   | 30  | Օրբելի 22 | 30  | 3.12.2020թ |
| 26 | 39263310/1 | Օրացույց սեղանի      |  | Սեղանի օրացույց նշումների համար տարբեր չափերի, պլոկի կամ թերթովի, պատկանդանով, գունավոր տպագրությամբ | հատ | 900  | 31500  | 35  | Օրբելի 22 | 35  | 3.12.2020թ |
| 27 | 39263520/1 | սեղմակ, միջին        |  | Մետաղական, լայնությունը 25 սմ                                                                        | հատ | 50   | 30000  | 600 | Օրբելի 22 | 600 | 3.12.2020թ |
| 28 | 39263530/1 | սեղմակ, մեծ          |  | Մետաղական, լայնությունը 32 սմ                                                                        | հատ | 80   | 48000  | 600 | Օրբելի 22 | 600 | 3.12.2020թ |
| 29 | 39292530/1 | Քանոն մետաղյա        |  | Ուղիղ քանոն՝ գծաբաժանումներով, առավելագույն երկարությունը 30 սմ                                      | հատ | 350  | 28000  | 80  | Օրբելի 22 | 80  | 3.12.2020թ |
| 30 | 22991190/1 | կավճապատ թուղթ       |  | Թուղթ կավճած, բարձր որակի, A4 (210x297) սմ ձևաչափի, 1 մ <sup>2</sup> մակերեսի գանգվածը 230 գ         | կգ  | 1980 | 59400  | 30  | Օրբելի 22 | 30  | 3.12.2020թ |

\* Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

\*\* Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա «անվանումը և ապրանքային նշանը» սյունակից հանվում է «և ապրանքային նշանը», իսկ «արտադրողի անվանումը և ծագման երկիրը» սյունակից՝ «արտադրողի անվանումը և» բառերը:

\*\*\* Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

**Գ Ն Ո Ր Դ**


ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ  
ՀՎՀՀ 02704199  
Ք.ԵՐԵՎԱՆ ՕՐԲԵԼԻ 22  
ՀՀ ՖՆ կենտրոնական  
գանձապետարան  
Հ/Հ 900011033124  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ



**Լ. ՄԱՐԴՈՅԱՆ**  
(ստորագրություն)  
Կ.Տ

**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**

«Ջի Վի Սա» ՍՊԸ  
ք. Երևան, Մ.Տարունցի 15/1  
«Ինելիքրանկ» ՓԲԸ  
Հ/Հ 2050022548811001  
ՀՎՀՀ 02282469  
Էլ. հասցեն՝ samvel.pogosyan@gmail.com  
Հեռ. +374 95 200 900  
ՏՆՕՐԵՆ



**Ս. ՊՈՂՈՍՅԱՆ**  
(ստորագրություն)  
Կ.Տ









**Գ Ն Ո Ր Դ**

ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ  
ՀՎՀՀ 02704199  
Ք.ԵՐԵՎԱՆ ՕՐԲԵԼԻ 22  
ՀՀ ՖՆ կենտրոնական  
գանձապետարան  
Հ/Հ 900011033124  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ



**Լ. ՄԱՐԴՈՅԱՆ**  
(ստորագրություն)  
Կ.Տ

**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**

«Ջի Վի Սա» ՍՊԸ  
ք. Երևան, Մ.Տարունցի 15/1  
«Ինելիքրանկ» ՓԲԸ  
Հ/Հ 2050022548811001  
ՀՎՀՀ 02282469  
Էլ. հասցեն՝ samvel.pogosyan@gmail.com  
Հեռ. +374 95 200 900  
ՏՆՕՐԵՆ

**Ս. ՊՈՂՈՍՅԱՆ**  
(ստորագրություն)  
Կ.Տ

Պայմանագրի կողմ  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

Պատվիրատու  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N  
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«    » «    » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «    » «    » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ  
«    » «    » 20 թ. դուրս գրված N \_\_\_\_ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն  
արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների |                                                  |                                                            |         |                                                            |         |                                                                                                                                     |
|---|-------------------------|--------------------------------------------------|------------------------------------------------------------|---------|------------------------------------------------------------|---------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
|   | անվանումը               | տեխնիկական<br>բնութագրի<br>համառոտ<br>շարադրանքը | քանակական ցուցանիշը                                        |         | կատարման ժամկետը                                           |         | Վճարման<br>ենթակա<br>գումարը<br>/հազար<br>դրամ/<br><br>Վճարման<br>ժամկ<br>ետը<br>/ըստ<br>վճար<br>ման<br>ժամ<br>անա<br>կացո<br>ւյցի/ |
|   |                         |                                                  | ըստ<br>պայմանագրով<br>հաստատված<br>գնման<br>ժամանակացույցի | փաստացի | ըստ<br>պայմանագրով<br>հաստատված<br>գնման<br>ժամանակացույցի | փաստացի |                                                                                                                                     |
|   |                         |                                                  |                                                            |         |                                                            |         |                                                                                                                                     |
|   |                         |                                                  |                                                            |         |                                                            |         |                                                                                                                                     |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը  
և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
Կ.Տ.

ԱԿՏ N \_\_\_\_\_  
 պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Գնորդ) և \_\_\_\_\_  
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը  
 (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը  
 պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման նպատակով  
 Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի   |                |                     |
|-----------|----------------|---------------------|
| անվանումը | չափման միավորը | քանակը<br>(փաստացի) |
|           |                |                     |
|           |                |                     |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**Հանձնեց**

\_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 \_\_\_\_\_  
 Ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 \_\_\_\_\_  
 ստորագրություն